# II

## *1890-ական թվականներ*

Ջ. ԲԱՅՐՈՆ

### *ՄՆԱՍ ԲԱՐՅԱՎ*

*Մնաս բարյավ, և թե կուզես՝*
*Դե հավիտյան մնաս բարյավ.*
*Որքան լինիս դու անիրավ*
*Վեր չի կենալ սիրտս քո դեմ։*
*Օ՜, թե կուրծքս ես բանայի,*
*Ուր գլուխդ դրել ես դու՝*
*Այժմ արդեն անդառնալի*
*Կորած քնով՝ հանգել ես դու —*

*Նորա ներքև կարենայիր*
*Գաղտնի մտքերըս որոշել,*
*Այն ժամանակ կիմանայիր,*
*Որ շատ խիստ ես դու ինձ պատժել։*

*Աշխարհքն, այո՜, գովում է քեզ,*
*Ծափ է հարում քո արարքին,*
*Բայց այդ գովքը պարսավ է քեզ*
*[Բայց այդ] ծաղր է իմ տանջանքին։*

Իմ մեղքն, [իրավ], ինձ խորտակեց,
Սակայն մի՞թե այլ զենք չըկար.
Եվ այն ձեռքը, որ ինձ գըգվեց,
20 Նա պետք է այս հարվածը տար։

Ոհ, մի՛ խաբվիր ունայն հուսով —
Կըթարշամի սերը կամաց,
Բայց դժվար է կամքի ուժով
Սիրտը սրտից պոկել հանկարծ։

25 Քո սիրտն [այնպես] զարկում է դեռ,
Իմն էլ թեև [միշտ] ցավատանջ,
Խոր կեղեքված ու կարեվեր —
Դողում է դեռ ինչպես առաջ...

Էս խոսքերը վիշտ են ամբողջ
30 Մեծ, քան վիշտը սգավորի,
Մենք երկուսս էլ կենդան ու ողջ
Ու ապրում ենք — ինչպես այրի։

Արդյոք երբ դու ուզես հրճվել
Թոթովանքով մեր աղջըկա,
35 Կըսովորցնե՞ս «հայրիկ» կանչել,
Երբ նրա մոտ հայրիկ չըկա։

Կամ նա երբ որ քեզ համբուրի,
Փարի քնքուշ թաթիկներով —
Պիտի հիշե՞ս — ով էր գերի
40 Ու երջանիկ լոկ քո սիրով։

Գուցե հանկարծ հիշես մեկին
Քեզնից հեռո՛ւ, արհամարհված
Ու տրրոփե սիրտդ կրկին.
Ինչպես երբեմն — ինձ նվիրված։
45 Իմ հանցանքն էլ գուցե հիշես —
Որոնք միայն քեզ են հայտնի,
Տանջանքներս էլ հիշիր նույնպես,
Եվ հույսերրս [անդառնալի]։

[Զգացմունքներս ողջ խորտակված
50 Գոռոզությունս, որ ընկճեցիր,
Նույնիսկ հոգիս քեզնից լքված
Թողնում է ինձ — անշունչ մի իր...]

Ողջ անցել է։ Զուր են խոսքերն,
Եվ իմ խոսքից զուրը — չրկա.
55 Բայց [վրդովված միտքն՝ ապստամբ]
Դուրս է հորդում նա ակամա։

Մնաս բարյավ։ Այսպես կըտրած
Իմ հարազատ կապերն ամեն,
Մերժված, մենակ, սիրտս կոտրած,
60 էլ ի՛նչ մահ է ինձ [հարկավոր]։